Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր Ն [illegible]

Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի CBANet միջբանկային համակարգչային ցանցի և ներդրման և հետագա սպասարկման մասին

ք. Երևան **«[illegible]» 04 2015 թ.**

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը՝ (հետագայում Ադմինիստրատոր) գործելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի և իր կանոնադրության համաձայն, ի դեմս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահ՝ Արթուր Ջավադյանի և մի կողմից, ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայությունը (հետագայում Գլխամասային աբոնենտ), գործելով կանոնադրության համաձայն, ի դեմս բանկի/կազմակերպության տնօրեն՝ Մ. Մինասյանը մյուս կողմից, (այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Սույն պայմանագրի առարկան CBANet միջբանկային համակարգչային ցանցի ներդրումն ու հետագա սպասարկումն է:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. **Ցանց՝** Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին պատկանող CBANet միջբանկային համակարգչային ցանցն է:

2.2. **Աբոնենտ՝** Գլխամասային աբոնենտի կառուցվածքային ստորաբաժանում հանդիսացող և Ցանցը օգտագործող անձն է (մասնաճյուղ, ներկայացուցչություն, գործառնական գրասենյակ և այլ):

2.3. **Ցանցի կառավարման կենտրոն՝** Գլխամասային աբոնենտներից հայտերի և ահազանգերի ընդունման, գրանցման և դրանց հիման վրա համապատասխան միջոցառումներ ձեռնարկող ծառայություն:

2.4. **Միացման կետ՝** Ցանցին միացման յուրաքանչյուր կետ:

2.5. **Կապի խափանում՝** Ցանցի ցանկացած հատվածում այնպիսի անսարքություն, որի արդյունքում Գլխամասային աբոնենտի/Աբոնենտի համար անհնար է դառնում Ցանցով տեղեկատվության փոխանակումը Ադմինիստրատորի, կամ այլ Գլխամասային աբոնենտների/Աբոնենտների հետ

2.6. **Ցանցի խափանում՝** Ցանցի որոշակի հատվածի/բաղադրիչի խափանում, որի արդյունքում տվյալ հատվածին/բաղադրիչին միացված բոլոր Գլխամասային աբոնենտների/Աբոնենտների համար անհնար է դառնում Ցանցով

տեղեկատվության փոխանանումը Ադմինիստրատորի, կամ այլ Գլխամասային աբոնենտների/Աբոնենտների հետ:

3.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմերը պարտավոր են.

3.1. Պահպանել և կատարել սույն պայմանագրին կցվող և նրա անբաժան մասը կազմող Ցանցի աշխատանքի շահագործման արարողակարգերը և անվտանգության պարտադիր պահանջները, որոնց ցանկը բերվում է Հոդված 12.3-ում: ՀՀ կենտրոնական բանկի կողմից սույն պայմանագիրը կնքելուց հետո ընդունվող՝ Ցանցի աշխատանքի, շահագործման արարողակարգերի և անվտանգության պարտադիր պահանջների վերաբերյալ իրավական ակտերը (որոշումները) ընդունման պահից կհամարվեն ընդգրկված Հոդված 12.3-ում:
Նոր ընդունվող իրավական ակտերի և Հոդված 12.3-ում ընդգրկված փաստաթղթերում փոփոխությունների վերաբերյալ Ադմինիստրատորը CBANet ցանցով դրանց ընդունումից 1 ամիս առաջ գրավոր տեղեկացնում է Գլխամասային աբոնենտներին՝ կից տրամադրելով համապատասխան նախագծերը, իսկ ընդունումից հետո՝ հաստատված տարբերակները:
3.2. Կապը միմյանց հետ հաստատել հետևյալ միջոցներով՝
ա/ Ցանցի- CBANet և internet հասցե,- Administrator@CBA/CBANet , it.dept@cba.am
բ/ հեռախոսահամար - 010 580283
գ/ ֆաքս - 010 567502
դ/ բողոքների համար նախատեսված հեռախոսահամար՝ 010 592920 և էլ. հասցե՝ IT_Mail/CBANet@CBANet կամ այլ հնարավոր միջոցներով:

Ադմինիստրատորը պարտավորվում է՝

3.3. Գլխամասային աբոնենտի աշխատակիցների համար կազմակերպել ծրագրերի (Հոդված 12.2) և գործող արարողակարգերի վերաբերյալ միանգամյա անվճար ուսուցում կամ խորհրդատվություն՝ ներդրվող ծրագրային ապահովման յուրաքանչյուր նոր տարբերակի համար:
3.4. Ցանցին միացնել և գործարկել Հոդված 12.1-ում նշված Գլխամասային աբոնենտների/աբոնենտների կողմից տրամադրվող տեխնիկածրագրային միջոցները ու այդ տեխնիկածրագրային միջոցներում տեղադրել ու գործարկել Հոդված 12.2-ում նշված ծրագրային միջոցները:
3.5. ՀՀ կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերին և ֆինանսական շուկայի համար առանցքային նշանակություն ունեցող համակարգերին (ցանկը սահմանվում է Ադմինիստրատորի կողմից) միացված Գլխամասային աբոնենտների կապի խափանման դեպքում խափանման մասին ահազանգը ստանալուց հետո 3 ժամվա ընթացքում վերացնել խափանումը և 3.2. կետում նշված միջոցներով տեղյակ պահել այդ մասին Գլխամասային աբոնենտին, եթե խափանումը պայմանավորված չէ Գլխամասային աբոնենտի մոտ առկա խնդիրներով:

3.6 3.5 կետով չսահմանված Գլխամասային աբոնենտների, ինչպես նաև Աբոնենտների կապի խափանման դեպքում խափանման մասին ահազանգը ստանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում վերացնել խափանումը և 3.2. կետում նշված միջոցներով տեղյակ պահել այդ մասին Աբոնենտին կամ Գլխամասային աբոնենտին:
3.7 Ցանցի երկարատև խափանումների հայտնաբերման դեպքում (24 ժամից ավել) 3.2. կետում նշված միջոցներով տեղյակ պահել այդ մասին Համակարգի բոլոր Գլխամասային աբոնենտներին:
3.8 Գլխամասային աբոնենտին տրամադրել Համակարգի ծառայություններից օգտվելու գնացուցակը (Գլուխ 13) և ամեն անգամ նրանում տեղի ունեցող փոփոխությունների մասին նախապես հայտնել առնվազն մեկ ամիս առաջ:
3.9 Անհրաժեշտության դեպքում Գլխամասային աբոնենտի հետ համատեղ կատարել Ցանցի միացման փորձնական շահագործումը:
3.10 Ցանցի բնականոն աշխատանքի համար ապահովել Ցանցի կառավարման կենտրոնի գործունեությունը և Գլխամասային աբոնենտին ապահովել այդ ծառայությանը դիմելու հնարավորությունը:
3.11 Պայմանագրի 3.20 կետում նշված անջատումների դեպքում այդ մասին անմիջապես տեղյակ պահել Գլխամասային աբոնենտին 3.2 կետում նշված միջոցներով:

Գլխամասային աբոնենտը պարտավոր է՝

3.12 Ցանցի շահագործման համար տրամադրել անհրաժեշտ տեխնիկական միջոցներ, համաձայն (Հոդված 12.1 կցվում է):
3.13. Ապահովել Ցանցի ներդրման և հետագա սպասարկման համար անհրաժեշտ աշխատանքային պայմաններ (Հոդված 12.3՝ կցվում է):
3.14. Ցանցի հետ աշխատելու թույլտվություն տալ միայն համապատասխան ուսուցում անցած անձանց:
3.15. Ցանցի չարտոնված օգտագործման կամ այդպիսի սպառնալիքի ծագման դեպքում 3.2. կետում նշված միջոցներով տեղյակ պահել այդ մասին Ցանցի կառավարման կենտրոնին:
3.16. Ժամանակին և սույն պայմանագրի 6 գլխում սահմանված կարգով կատարել Ցանցի ներդրման ու շահագործման հետ կապված բոլոր վճարումները:
3.17. Պահպանել Ադմինիստրատորի կողմից Գլխամասային աբոնենտի/Աբոնենտի մոտ տեղակայված ու Ցանցին միացված տեխնիկածրագրային միջոցների շահագործման բոլոր կանոնները:
3.18. Տեղեկացնել Ադմինիստրատորին այն դեպքերի վերաբերյալ, երբ Գլխամասային աբոնենտը մեկ աշխատակայանի միջոցով Ցանցին միացնում է մեկ այլ կառույց՝ իրեն ենթակա կամ կողմնակի: Տվյալ միացումների համար պատասխանատվությունը կրում է միացումը կատարող Գլխամասային աբոնենտը:
3.19. Որպես Գլխամասային աբոնենտ միանալ Ցանցին առնվազն երկու կապուղով համաձայն Գլուխ 13-ում բերված միացման տեսակների:

Ադմինիստրատորն իրավունք ունի՝

3.20. Գլխամասային աբոնենտի մեղքով Ցանցի բնականոն աշխատանքին սպառնացող որևէ վտանգի դեպքում տվյալ Գլխամասային աբոնենտին ժամանակավորապես անջատել ցանցից՝ մինչև խնդրի լուծումը:

3.21. Միակողմանիորեն փոփոխություններ կատարել Համակարգի ծառայություններից օգտվելու գնացուցակում (Գլուխ 13) և ՀՀ ԿԲ նախագահի կողմից հաստատելուց հետո գրավոր՝ CBANet ցանցի միջոցով փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել Գլխամասային աբոնենտներին: Գրավոր տեղեկացման պահից սկսած 1 ամիս հետո փոփոխությունները մտնում են ուժի մեջ և հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մաս: Գնացուցակում կատարվելիք փոփոխությունների հետ համաձայն չլինելու դեպքում Գլխամասային աբոնենտը իրավունք ունի հրաժարվել փոփոխվող ծառայության տեսակից՝ մինչև փոփոխության ուժի մեջ մտնելը գրավոր տեղեկացնելով Ադմինիստրատորին: Ուշացումով տեղեկացնելու դեպքում Ադմինիստրատորը իրավունք ունի ստանալ վճարը փոփոխված չափով:

4.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Կողմերից մեկը Ցանցի շահագործման տեխնոլոգիական և անվտանգության պարտադիր պահանջները (Հոդված 12.3) չպահպանելու կամ ոչ ճիշտ պահպանելու պատճառով մյուս կողմին պատճառած վնասը հատուցում է՝ վնասի ամբողջ չափով: Սույն պայմանագրի համաձայն Ադմինիստրատորի կողմից Գլխամասային աբոնենտի մոտ իրականացվող ստուգումների ընթացքում հայտնաբերված՝ անվտանգության պարտադիր պահանջների (Հոդված 12.3) չկատարման դեպքերի համար Գլխամասային աբոնենտը կրում է պատասխանատվություն վճարելով տուգանք 250.000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ գումարի չափով, եթե տուգանքի ավելի փոքր գումար չի սահմանվի ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

4.2. Սույն պայմանագրի 3.6. կետի խախտման դեպքում Ադմինիստրատորը տույժ է վճարում Գլխամասային աբոնենտին հետևյալ չափերով՝

- 24-ից մինչև 72 ժամվա ընթացքում ցանցի աշխատանքը չվերականգնելու դեպքում - ցանցը 24-ժամից ավել չաշխատած յուրաքանչյուր ժամվա համար այդ ժամանակահատվածի համար սահմանված տարիֆի չափով ((ամսեկան վարձ)/(30 x 24));
- 72 ժամից ավել ցանցի աշխատանքը չվերականգնելու դեպքում - ցանցը 72-ժամից ավել չաշխատած յուրաքանչյուր ժամվա համար այդ ժամանակահատվածի համար սահմանված տարիֆի կրկնակի չափով (2՛ (ամսեկան վարձ)/(30 x 24)):

4.3. Սույն պայմանագրի 3.5. կետի խախտման դեպքում Ադմինիստրատորը տույժ է վճարում Գլխամասային աբոնենտին հետևյալ չափերով՝

- 24 ժամից ավել ցանցի աշխատանքը չվերականգնելու դեպքում- ցանցը 24-ժամից ավել չաշխատած յուրաքանչյուր ժամվա համար այդ ժամանակահատվածի համար սահմանված տարիֆի կրկնակի չափով (2՛ (ամսեկան վարձ)/(30 x 24)):
- 3 ժամից մինչև 24 ժամ ցանցի աշխատանքը չվերականգնելու դեպքում- 3 ժամից ավել չաշխատած յուրաքանչյուր ժամի համար այդ ժամանակահատվածի համար սահմանված տարիֆի չափով((ամսեկան վարձ)/(30 x 24)):

4.4. Կողմերը պատասխանատվություն չեն կրում, եթե՝

- իրենց պարտականությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ոչ իրենց մեղքի:
- իրենց պարտականությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը տեղի է ունեցել ֆորս-մաժորային հանգամանքների(Գլուխ 10) պատճառով:

4.5. Գլխամասային աբոնենտի կամ Աբոնենտի մեղքով առաջացած Ցանցի խափանման դեպքում, Գլխամասային աբոնենտից գանձվում է Ցանցի վերականգնման վարձավճար (Գլուխ 13) երկկողմանի ակտով հաստատված, եթե Ադմինիստրատորը կրում է նման ծախսեր:

4.6. Գլխամասային աբոնենտի կամ Աբոնենտի մեղքով առաջացած ցանցի խափանման դեպքում չեն գործում պայմանագրի 3.5, 3.6, 4.2 և 4.3 կետերը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄ

5.1. Ցանցին Գլխամասային աբոնենտի և Աբոնենտների միացման աշխատանքները կատարվում են Գլխամասային աբոնենտի կողմից այդ մասին գրավոր հայտի ներկայացման հիման վրա:

5.2. Առաջին հերթին կատարվում է Գլխամասային աբոնենտի միացումը Ցանցին, ինչը սկսվում է նրա կողմից այդ մասին գրավոր հայտի ներկայացման պահից:

5.3. Ցանցին Գլխամասային աբոնենտի միացման աշխատանքները համարվում են ավարտված Ադմինիստրատորի և Գլխամասային աբոնենտի միջև այդ մասին երկկողմանի ակտի ստորագրման պահից:

5.4. Ցանցին Գլխամասային աբոնենտի միացման աշխատանքների ավարտից հետո սկսվում է Գլխամասային աբոնենտի կողմից ցանցի շահագործումը:

5.5. Ադմինիստրատորը Գլխամասային աբոնենտի գրավոր հայտերի հիման վրա կարող է Ցանցին միացնել նաև Գլխամասային աբոնենտի կողմից նշված Աբոնենտներին:

5.6. Ցանցին Աբոնենտի միացման աշխատանքները համարվում են ավարտված Ադմինիստրատորի և Գլխամասային աբոնենտի/Աբոնենտի միջև այդ մասին երկկողմանի ակտի ստորագրման պահից: Տվյալ ակտը կարող է ստորագրվել նաև միացման աշխատանքներ իրականացնող Ադմինիստրատորի ներկայացուցչի և Աբոնենտի կողմից:

5.7. Ադմինիստրատորը Գլխամասային աբոնենտի գրավոր հայտերի հիման վրա կարող է Գլխամասային աբոնենտին ու Գլխամասային աբոնենտի կողմից նշված Աբոնենտներին Ցանցին միացնել նաև երկրորդ կամ ավել կապուղիներով ըստ Գլուխ 13-ում սահմանված կապուղիների տեսակների ու սակագների:

5.8. Ցանցին մեկից ավել կապուղիներով միացման աշխատանքները համարվում են ավարտված Ադմինիստրատորի և Գլխամասային աբոնենտի միջև այդ մասին երկկողմանի ակտի ստորագրման պահից: Տվյալ ակտը կարող է ստորագրվել նաև միացման աշխատանքներ իրականացնող Ադմինիստրատորի ներկայացուցչի և Աբոնենտի կողմից:

5.9. Գլխամասային աբոնենտների կողմից Ադմինիստրատորին ներկայացված Ցանցին միացման հայտերը համարվում են գործող 6 ամսվա ընթացքում, այնուհետև, Ադմինիստրատորի կողմից իրականացվում է հարցում ժամկետի երկարացման կամ

հայտի դադարեցման վերաբերյալ. եթե հայտի բավարարումը հնարավոր չէ իրականացնել՝ ներկայացնելով պարզաբանումը:

6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Ցանցի ներդրման, զարգացման, ուսուցման, շահագործման և վերականգնման հետ կապված ծախսերը Գլխամասային աբոնենտի կողմից փոխհատուցվում են Ցանցի ծառայություններից օգտվելու գնացուցակում (Գլուխ 13) նշված չափով: Ցանցի միացման, զարգացման, վերականգնման, ուսուցման դիմաց վարձավճարը գանձվում է դրանց իրականացումը հավաստող ակտի հիման վրա:

6.2. Գնացուցակում նշված բոլոր գները սահմանվում են ՀՀ դրամով, ծառայությունների դիմաց վճարումը կատարվում է ՀՀ դրամով: Գները ներառում են ավելացված արժեքի հարկը:

6.3. Մինչև յուրաքանչյուր օրացուցային ամսվա 15-ը Ադմինիստրատորը CBANet ցանցով(գրավոր պահանջի դեպքում նաև թղթային) Գլխամասային աբոնենտին ներկայացնում է նախորդ ամսվա համար վճարման ենթակա գումարի հաշվարկ՝ որտեղ նշվում են Գլխամասային աբոնենտի և նրա Աբոնենտների նախորդ ամսում Ցանցին միացման, զարգացման, վերականգնման, ուսուցման, շահագործման հետ կապված գումարները ու Ցանցի խափանման պատճառով 3.5, 3.6 կետերին համապատասխան չաշխատած ժամերը, և 4.2 և 4.3 կետերին համապատասխան հաշվարկված տուգանքները:

6.4. Հաշվարկի հետ կապված առարկությունները Գլխամասային աբոնենտը կարող է Ադմինիստրատորին ներկայացնել հաշվարկը ստանալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում:

6.5. Առարկությունները քննարկվում և լուծվում են հաշվարկի ստացման օրվան հաջորդող 2 աշխատանքային օրվա ընթացքում:

6.6. ՀՀ կենտրոնական բանկում Գլխամասային աբոնենտի կողմից հաշիվ ունենալու դեպքում 2 աշխատանքային օրվա ընթացքում առարկում չստանալու դեպքում 3-րդ աշխատանքային օրը Ադմինիստրատորը Գլխամասային աբոնենտի _____ հաշվից ուղղակի դեբետագրման միջոցով գանձում է համապատասխան գումարը:

6.7. ՀՀ կենտրոնական բանկում Գլխամասային աբոնենտի հաշվի բացակայության դեպքում գումարները փոխանցվում են ՀՀ կենտրոնական բանկի հետևյալ հաշվեհամարին **103001702069** հաշիվը ներկայացնելուց հետո 3-րդ աշխատանքային օրը:

6.8. Գլխամասային աբոնենտի 6.6 կետով սահմանված հաշվին գումարի բացակայության դեպքում կամ 6.7 կետով սահմանված գումարների չվճարելու դեպքում Գլխամասային աբոնենտի դրամական պարտավորությունը համարվում է չկատարված և Գլխամասային աբոնենտը վճարում է տուգանք յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար 6.6 և 6.7 կետերով իրեն ներկայացված ամսական գումարի 1% -ի չափով:

6.9. Վճարման ենթակա գումարը 6.6 և 6.7. կետերում նշված ժամկետից 10 (տասը) օր ուշացնելու և չվճարելու դեպքում Ադմինիստրատորը կարող է, նախօրոք տեղեկացնելով Գլխամասային աբոնենտին, ժամանակավորապես անջատել Ցանցից

մինչև Գլխամասային աբոնենտի կողմից պարտավորությունների լրիվ չափով կատարումը:

6.10. Վճարումը հաշվարկվում է Գլխամասային աբոնենտին և/կամ Աբոնենտին Ցանցին միացնելու աշխատանքների ավարտի պահից:

6.11. Սույն պայմանագրի 3.20 կետով նախատեսված՝ Գլխամասային աբոնենտին ժամանակավորապես ցանցից անջատելու դեպքում, Ցանցի շահագործման հետ կապված վճարների հաշվարկում չի ընդգրկվում ժամանակավոր դադարեցման ժամանակահատվածը, յուրաքանչյուր ժամի համար սահմանված տարիֆի չափով ((ամսեկան վարձ)/(30x24)):

7. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

7.1 Գլխամասային աբոնենտը պարտավոր է՝

7.1.1. Ապահովել իրեն տրամադրված նույնականացնող (CERT.ID, SERVER.ID, USER.ID) ֆայլերը (այսուհետ՝ ID-ֆայլեր) և նշված ID-ֆայլերի պահպանման և մշակման միջոցների ֆիզիկական և տրամաբանական անվտանգությունը:

7.1.2. Անմիջապես՝ 3.2 կետում նշված կապի որևէ միջոցով տեղեկացնել Ադմինիստրատորին տեղեկատվական անվտանգության միջադեպերի մասին, այն է.

- իրեն տրամադրված ID-ֆայլերի վնասում, կորուստ, փոփոխում, ոչնչացում, հափշտակում,
- իրեն տրամադրված գաղտնաբառերի, էլեկտրոնային բանալիների կորուստ կամ վարկաբեկում,
- կոնֆիդենցիալ տեղեկատվության արտահոսք,
- իրեն տրամադրված իրավասությունների տիրապետում այլ անձանց կողմից:

7.1.3. Պայմանագիրը դադարելուց հետո Ադմինիստրատորին հանձնել իր տնօրինության տակ գտնվող Ադմինիստրատորին պատկանող ID-ֆայլերը:

7.1.4. Չօգտագործել Ադմինիստրատորի ID-ֆայլերի անվտանգության մեջ իրեն հայտնի դարձած խոցելիությունները, հակառակը՝ այդ խոցելիությունների մասին տեղեկացնել Ադմինիստրատորին:

7.1.5. Ադմինիստրատորի հետ տեղեկատվությամբ և փաստաթղթերով փոխանակվել միայն նախապես սահմանված կարգով:

8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

8.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով:

8.2. Այն դեպքերում, երբ կողմերից ոչ մեկը չի դիմել սույն պայմանագիրը դադարեցնելու առաջարկությամբ՝ պայմանագրի ժամկետը լրանալուց 1 (մեկ) ամիս առաջ, պայմանագիրը համարվում է երկարացված հերթական մեկ տարով:

8.3. Կողմերն իրավունք ունեն միակողմանիորեն դադարեցնել սույն պայմանագիրը 30 օր առաջ այդ մասին տեղյակ պահելով մյուս կողմին, եթե մյուս կողմը չի կատարում

կամ ոչ պատշաճ է կատարում սույն պայմանագրով նախատեսված իր պարտականությունները:

8.4. Կողմերն իրավունք ունեն միակողմանի կարգով դադարեցնել սույն պայմանագիրը այդ մասին տեղյակ պահելով մյուս կողմին ոչ ուշ քան 1(մեկ) ամիս առաջ:

8.5. Գլխամասային աբոնենտը իրավունք ունի անջատել Աբոնենտին ցանցից և դադարեցնել անջատվող աբոնենտի հետ կապված իր բոլոր պարտավորությունները՝ այդ մասին տեղյակ պահելով Ադմինիստրատորին ոչ ուշ քան 1(մեկ) ամիս առաջ:

9.ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1 Կողմերի միջև առաջացող վեճերը և տարաձայնությունները լուծվում են փոխադարձ համաձայնությամբ՝ սույն պայմանագրի շրջանակներում:

9.2 Սույն Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճերի լուծումը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

10. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(Ֆորս Մաժոր)

10.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը, պետական մարմինների կողմից նախապես չտեղեկացված շինարարական աշխատանքները և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 30(երեսուն) օրից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

11. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

11.1 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի փոխհամաձայնությամբ՝ բացառությամբ 3.8 կետի:

11.2 Աբոնենտների համար գործում են սույն պայմանագրի բոլոր կետերը, բացառությամբ Գլխամասային աբոնենտի պատասխանատվությանը վերաբերող ենթակետերի:

11.3 Աբոնենտի գործունեության համար պատասխանատվություն է կրում նրան ցանցին միացնելու առաջարկություն կատարած Գլխամասային աբոնենտը:

11.4 Աբոնենտի լուծարման ընթացքում Գլխամասային աբոնենտը տեղեկացնում է Ադմինիստրատորին լուծարվող աբոնենտին ցանցից անջատման և վերջինիս նկատմամբ իր կողմից պարտավորությունների դադարեցման մասին:

11.5. Սույն պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից լուծված համարել նախկինում կողմերի միջև կնքված սույն Պայմանագրի առարկայի վերաբերյալ պայմանագրերը(համաձայնագրերը):

11.6 Սույն պայմանագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

12. Համակարգի շահագործման համար անհրաժեշտ տեխնիկածրագրային միջոցները և կանոնակարգող փաստաթղթեր

12.1 Գլխամասային աբոնենտի կողմից տրամադրվող տեխնիկածրագրային միջոցներ

Անվանում	Քանակ
Սերվերին ներկայացվող մինիմալ պահանջներ (Գլխամասային աբոնենտի միացում սերվերով)	
Operating System - Windows Server 2003 Enterprise or Standard Edition x86-32 and future OS fix packs or higher	1
Disk Space - 80 GB minimum or more recommended	1
Memory - 1 GB or more strongly recommended per CPU	1
Processor - Intel Pentium or higher and compatibles (32-bit and 64-bit chips as appropriate), or equivalents	1
NIC	1
UPS 1000 VA	1
Աբոնենտական կայանին ներկայացվող մինիմալ պահանջներ (Գլխամասային աբոնենտի, ինչպես նաև յուրաքանչյուր Աբոնենտի միացում աբոնենտական կայանով՝ ոչ սերվերով)	
Operating System - Windows XP or higher	1
Disk Space - 40 GB minimum or more recommended	1
Memory - 1 GB or more strongly recommended per CPU	1
Processor – Intel Pentium 4, 1.2 GHz or higher and compatibles (32-bit and 64-bit chips as appropriate), or equivalents	1
NIC	1
UPS 500 VA	1
Ethernet միացումների դեպքում՝ Cisco Systems" Router (2 Ethernet Interfaces) DSL միացումների դեպքում՝ "Cisco Systems" Router (1 SHDSL and 1 Ethernet Interfaces)	1

12.2 Գլխամասային աբոնենտի և աբոնենտի համար տեղադրվող ծրագրային միջոցներ

Աբոնենտի համար տեղադրվող

Անվանում	Քանակ
Lotus Notes client V6.5 ծրագրային փաթեթը, կամ ավելի բարձր վարկած	1

Գլխամասային աբոնենտի համար տեղադրվող

Անվանում	Քանակ
Lotus Notes client V6.5 ծրագրային փաթեթ, կամ ավելի բարձր վարկած	1
Lotus Domino Server V6.5 ծրագրային փաթեթ, կամ ավելի բարձր վարկած	1

12.3 Համակարգի աշխատանքի և շահագործման արարողակարգերը և անվտանգության պարտադիր պահանջները

Ցանկ
1. «ԱԲՈՆԵՆՏՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՍԻԲԻԷՅՆԵԹ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՑԱՆՑԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ» (հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2007թ. հոկտեմբերի 16-ի թիվ 327Ն որոշմամբ)

13. Համակարգի ծառայություններից օգտվելու նոր գնացուցակ (յուրաքանչյուր աբոնենտի համար)

<<	Աշխատանքների անվանում	Միանվագ (միացման ժամանակ) AMD	Ամսեկան (ընթացիկ) AMD
1.	**Երևան քաղաքում**		
1.1	**Լարային(պղնձյա) կապուղով միացում ցանցին**		
1.1.1	Սերվեր ունեցող աբոնենտի համար մեկ կապուղով Ցանցին միանալու համար	210000	40000
1.1.2	Յուրաքանչյուր աբոնենտի համար մեկ կապուղով Ցանցին միանալու համար	150000	40000
1.1.3	Սերվեր ունեցող աբոնենտին երկու կապուղով Ցանցին միանալու համար	300000	55000
1.1.4	Յուրաքանչյուր աբոնենտի համար երկու կապուղով Ցանցին միանալու համար	245000	55000
1.1.5	CDN պորտի առկայության դեպքում աբոնենտի միացման բազային 512Կբ/Վ արագության նկատմամբ յուրաքանչյուր հավելյալ 128Կբ/Վ արագության համար	5000	3000
1.1.6	Աբոնենտին երկրորդ կապուղու տրամադրման համար	95000	
1.1.7	Աբոնենտի մոտ լարային կապուղու առկայության դեպքում աբոնենտի միացումը ցանցին	55000	
1.2	**Օպտիկամանրաթելային կապուղով միացումը ցանցին**		
1.2.1	Սերվեր ունեցող աբոնենտի համար	170000	Կապուղու արագությունը մինչև3Մբ/Վ - 40000 մինչև5Մբ/Վ - 42000 մինչև10Մբ/Վ - 55000 մինչև20Մբ/Վ - 70000
1.2.2	Յուրաքանչյուր աբոնենտի համար	110000	Կապուղու արագությունը մինչև3Մբ/Վ - 40000 մինչև5Մբ/Վ - 42000 մինչև10Մբ/Վ - 55000 մինչև20Մբ/Վ - 70000
1.2.3.	Աբոնենտին երկու կապուղով ցանցին միացնելու համար	110000 + 750 *N , N- օպտիկամանրաթելային կապուղու	յուրաքանչյուր կապուղու արագությունը մինչև 3Մբ/Վ - 60000

		երկարությունն է մետրերով աբոնենտից մինչև կապի երկրորդ մատակարարի մոտակա հանգույցը	մինչև5Մբ/վ - 65000 մինչև10Մբ/վ - 82200 մինչև20Մբ/վ - 114000
1.2.4	Աբոնենտին երկրորդ օպտիկամանրաթելային կապուղու տրամադրման համար	750 *N , N- օպտիկամարաթելայի ն կապուղու երկարությունն է մետրերով աբոնենտից մինչև կապի մատակարարի մոտակա հանգույցը	
1.2.5	Լարային կապուղին օպտիկամանրաթելայինով փոխարինելու համար	750 *N , N- օպտիկամարաթելայի ն կապուղու երկարությունն է մետրերով աբոնենտից մինչև կապի մատակարարի մոտակա հանգույցը	
1.2.6	Աբոնենտի մոտ օպտիկամանրաթելային կապուղու առկայության դեպքում դեպքում աբոնենտին CBANet ցանցին միացնելու համար	55000	
1.3	**Օպտիկամանրաթելային (1 կամ 2) և լարային կապուղիներով համատեղ միացում ցանցին**		
1.3.1	Սերվեր ունեցող աբոնենտի համար (երկրորդ օպտիկամանրաթելային կապուղու արագությունը տրամադրվում է մինչև 3Մբ/վ)	210000 + 750 *N , N- օպտիկամարաթելայի ն կապուղիների գումարային երկարությունն է մետրերով աբոնենտից մինչև կապի մատակարարների մոտակա հանգույցները	**Առաջին օպտիկամանրաթելային կապուղու արագությունը** մինչև3Մբ/վ - 60000 մինչև5Մբ/վ - 65000 մինչև10Մբ/վ - 82200 մինչև20Մբ/վ - 114000
1.3.2	Յուրաքանչյուր աբոնենտի համար (երկրորդ օպտիկամանրաթելային կապուղու արագությունը տրամադրվում է մինչև 3Մբ/վ)	150000 + 750 *N , N- օպտիկամարաթելայի ն կապուղիների գումարային երկարությունն է մետրերով աբոնենտից մինչև կապի մատակարարների մոտակա հանգույցները	**Առաջին օպտիկամանրաթելային կապուղու արագությունը** մինչև3Մբ/վ - 60000 մինչև5Մբ/վ - 65000 մինչև10Մբ/վ - 82200 մինչև20Մբ/վ - 114000
1.3.3	CDN պորտի առկայության դեպքում	5000	3000

	լարային կապուղով աբոնենտի միացման բազային 512Կբ/Վ արագության նկատմամբ յուրաքանչյուր հավելյալ 128Կբ/Վ արագության համար		
1.3.4	Աբոնենտին երկրորդ՝ լարային կապուղու տրամադրման համար	95000	
1.3.5	Աբոնենտին երկրորդ՝ օպտիկականմանրաթելային կապուղու տրամադրման համար	750 *N , N- օպտիկամանրաթելայի ն կապուղու երկարությունն է մետրերով աբոնենտից մինչև կապի մատակարարի մոտակա հանգույցը	
1.3.6	Աբոնենտին երկրորդ՝ օպտիկականմանրաթելային կապուղով միացումը ցանցին աբոնենտի մոտ կապուղու առկայության դեպքում	55000	
1.3.7	Աբոնենտին երկրորդ՝ լարային կապուղով միացումը ցանցին աբոնենտի մոտ կապուղու առկայության դեպքում	-	
2.	**ՀՀ մարզերում (Երևան քաղաքից դուրս)**		
2.1.	**Լարային (պղնձյա) կապուղով միացում ցանցին**		
2.1.1	Սերվեր ունեցող աբոնենտի համար	210000	60000
2.1.2	Յուրաքանչյուր աբոնենտի համար	150000	60000
2.1.3	Սերվեր ունեցող աբոնենտին երկու կապի գծերով ցանցին միացման համար	300000	60000
2.1.4	CDN պորտի առկայության դեպքում աբոնենտի միացման բազային 192Կբ/Վ արագության նկատմամբ յուրաքանչյուր հավելյալ 128Կբ/Վ արագության համար	10000	6500
2.1.5	Աբոնենտին երկրորդ կապուղու տրամադրման համար	95000	
3.	**Այլ ծառայություններ**		
3.1	**Փոխարինում և վերամիացում**		
3.1.1	Աբոնենտական կայանի փոխարինումը սերվերով	60000	
3.1.2	Աբոնենտի վերամիացում նոր հասցեում լարային կապուղով	95000	
3.1.3	Աբոնենտի վերամիացում նոր հասցեում Օպտիկամանրաթելային	750 *N , N- օպտիկամանրաթելային	

	կապուղով	կապուղու երկարությունն է մետրերով աբոնենտից մինչև կապի մատակարարի մոտակա հանգույցը	
3.1.5	Վերամիացումը ցանցին տվյալ հասցեում աբոնենտի մոտ լարային կամ օպտիկամանրաթելային կապուղու առկայության դեպքում		
3.1.6	Աբոնենտի վերամիացում նոր հասցեում միաժամանակ օպտիկամանրաթելային և լարային կապուղիներով	95000 + 750 *N , N- օպտիկամանրաթելային կապուղու երկարությունն է մետրերով աբոնենտից մինչև կապի մատակարարի մոտակա հանգույցը	
	Աբոնենտի վերամիացում նոր հասցեում միաժամանակ 2 օպտիկամանրաթելային և 1 լարային կապուղիներով	95000 + 750 *N , N- օպտիկամանրաթելային կապուղիների գումարային երկարությունն է մետրերով աբոնենտից մինչև կապի մատակարարների մոտակա հանգույցները	
3.1.6	Նույն իրավաբանական հասցեում նույն կապի գծով երկրորդ և ավելի աբոնենտի վերամիացում ցանցին		
3.2	**Աբոնենտի փոփոխում նույն իրավաբանական հասցեյում CBANet ցանցի գծի առկայության դեպքում**		
3.2.1	Յուրաքանչյուր Աբոնենտի համար ծրագրային փաթեթի տեղադրմամբ	60000	
3.2.2	Աբոնենտի մոտ Ադմինիստրատորի անմիջական մասնակցությամբ առանց ծրագրային փաթեթի տեղադրման	20000	
3.2.3	Առանց ադմինիստրատորի մասնակցության և առանց ծրագրային փաթեթի տեղադրման	անվճար	
3.3	**Նույն իրավաբանական հասցեում նույն կապուղով երկու և ավելի գլխամասային աբոնենտների սերվերների միացում՝ CBANet ցանցի կապուղու առկայության դեպքում**		
3.3.1	Յուրաքանչյուր Գլխամասային աբոնենտի համար	120000	Սակագների 1 և 2 գլուխների ամսական (ընթացիկ) գումարների աբոնենտի համար սահմանված

			սակագնի 70% չափով
3.4	**Նույն իրավաբանական հասցեում նույն կապի գծով երկու և ավելի աբոնենտների աբոնենտական կայանների միացում՝ CBANet ցանցի գծի առկայության դեպքում**		
3.4.1	Յուրաքանչյուր աբոնենտի համար	60000	Սակագների 1 և 2 գլուխների ամսական (ընթացիկ) գումարների մեկ աբոնենտի համար սահմանված սակագնի 70% չափով
3.5	**Գլխամասային աբոնենտի մեկ աշխատակցի ուսուցում**		
3.5.1	Ցանց և Lotus Notes client V6 կամ ավելի բարձր ծրագիրային փաթեթի համար	8000	
3.5.2	Ցանց և Lotus Domino Server V V6 կամ ավելի բարձր ծրագրային փաթեթի համար	20000	

- Գինը չի ներառում սերվերի միացման համար պահանջվող լրացուցիչ սարքերի արժեքը, որը ենթակա է վճարման աբոնենտի կողմից:

ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ

Ադմինիստրատոր
ՀՀ կենտրոնական բանկ
Նախագահ՝

Արթուր Ջավադյան

Գլխամասային աբոնենտ
ՀՀ ԱՄՇՆ ՍԱՊՕ
ք. Երևան, Նալբանդյան 13
ՀՀ 900011556355
ՀԿՀՀ 02505511

Մ. Մինասյան

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

2015 թվականի ապրիլի 1-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի CBANet միջբանկային համակարգչային ցանցի և ներդրման և հետագա սպասարկման մասին» N 21/010415-5-CBANet/P պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ

ք. Երևան. ***«11» 12 2017թ.***

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը՝ գործելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի և իր կանոնադրության համաձայն (այսուհետ՝ Կողմ-1), ի դեմս ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝ Արթուր Ջավադյանի մի կողմից, և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկը (այսուհետ՝ Կողմ-2), ի դեմս աշխատակազմի ղեկավար Մ.Մինասյանի, ով գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. դեկտեմբերի 27-ի N 1531-Ն որոշմամբ հաստատված Ծառայության կանոնադրության հիման վրա, հիմք ընդունելով 2015 թվականի ապրիլի 1-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի CBANet միջբանկային համակարգչային ցանցի և ներդրման և հետագա սպասարկման մասին» պայմանագիրը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

Համաձայնագրի առարկան

1. Կողմերը որոշել են 2015 թվականի ապրիլի 1-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի CBANet միջբանկային համակարգչային ցանցի և ներդրման և հետագա սպասարկման մասին» N 21/010415-5-CBANet/P պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) կողմերը արձանագրում են, որ ի լրումն Պայմանագրով մատուցված ծառայությունների 2017թ. հոկտեմբերի 2-ից լրացուցիչ միացված է Գլխամասային աբոնենտի՝ ք. Երևան, Նալբանդյան 13 հասցեում CBANet միջբանկային

համակարգչային ցանցի պահուստային օպտիկամանրաթելային կապուղին՝ 3մբ/վ արագությամբ:

2) Համաձայնագրի 1-ին կետի 1-ին ենթակետի մատուցված լրացուցիչ ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարը կազմում է՝

ա) համաձայն Պայմանագրի 13-րդ մասի 1.2.5-րդ կետի միանվագ (միացման ժամանակ) վճարը կազմում է 112.500 ՀՀ դրամ (որը կազմված է՝ 750ՀՀ դրամ x 150մետր (կապուղու երկարություն)),

բ) համաձայն Պայմանագրի 13-րդ մասի 1.2.4.-րդ կետի ամսական (ընթացիկ) վճարը կազմում է 60.000 ՀՀ դրամ, որը կազմված է՝ 1.2.2-րդ կետում նշված առաջին կապուղու համապատասխան արագության սակագնին (40.000 ՀՀ դրամ) գումարած երկրորդ կապուղու համապատասխան արագության սակագնի վճար՝ մինչև 3մբ/վ – 20.000 ՀՀ դրամ,

գ) հաշվի առնելով լրացուցիչ ծառայության մատուցման ժամկետի սկիզբը, Կողմերը արձանագրում են, որ 2017թ. հոկտեմբեր ամսվա վճարը կազմում է 59.354 ՀՀ դրամ 84 լումա,

դ) կողմերը համաձայնվում են, որ սույն Համաձայնագրի 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված 2017թ. հոկտեմբեր ամսվա վճարը՝ 171.854,84 ՀՀ դրամ գումարի չափով Գլխամասային աբոնենտը պարտավորվում է վճարել մինչև 2017թ. դեկտեմբերի 25 -ը:

2. Համաձայնագրի գործողության ժամկետը

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում պատշաճ վավերացման պահից:

2.2. Սույն համաձայնագիրը համարվում է Կողմերի միջև 2015 թվականի ապրիլի 1-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի CBANet միջբանկային համակարգչային ցանցի և ներդրման և հետագա սպասարկման մասին» N 21/010415-5-CBANet/P պայմանագր անբաժանելի մասը:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 2 (չորս) օրինակից:

3. Կողմերի հասցեները և ստորագրությունները

Կողմ-1	Կողմ-2
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ՝ Հ/Հ ՀԿՀՀ	ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ք.Երևան Նալբանդյան 13 Հ/Հ 900011556355 ՀԿՀՀ 02505511
ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝ Արթուր Ջավադյան	Աշխատակազմի ղեկավար Մ.Մինասյան